

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՑՅ**

ՈՒՍՈՒՄՆԱՕՃԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2008

ՀՏԴ 801

ԳՄԴ 80

Յ 449

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Կարաբեկյան
Գրախոսներ՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Տոնիկյան
պատմական գիտությունների թեկնածու, ասիստենտ Հ. Քոչարյան

Ցավորմյան Մ.Մ.

3 449 Ուսումնական և հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույց:
Եր.: ԵՊՀ Հրատարակչություն, 2008, 50 էջ

Ուղեցույցում ամփոփ ձևով ներկայացված են արաբագիտության և սեմագիտության բնագավառներում, ինչպես նաև հարակից ոլորտներում ուսումնական և հետազոտական աշխատանքների շարադրմանը, կառուցվածքային ու տեխնիկական ձևավորմանը ներկայացվող հիմնական պահանջները:

Նախատեսված է արևելագիտության ֆակուլտետի ուսանողների և մագիստրանտների համար: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև արաբագիտության և սեմագիտության հարցերով հետաբերվող մասնագետների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 80

ISBN 978—5—8084—0939—2

© ԵՊՀ Հրատարակչություն, 2008

© Ցավորմյան Մ.Մ., 2008

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շարադրանքի կառուցվածքի ձևավորում.....4

2. Շարադրանքի տեխնիկական ձևավորում17

3. Թեմայի ընտրություն.....26

4. Գիտական աշխատանքների գնահատում27

5. Ռեֆերատներ և զեկուցումներ29

6. Կուրսային աշխատանքներ30

7. Ավարտական աշխատանքներ.....31

8. Օգտակար գրականություն.....34

9. Անհրաժեշտ գրականության ձեռքբերում35

Հավելվածներ.....38

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ուղեցույցը նախատեսված է ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ուսանողների և մագիստրանտների համար ու կոչված օգնելու ռեֆերատների, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի շարադրման և ձևավորման հարցում: Հաջորդող դրույթները մասնատված են ըստ ուսումնական և հետազոտական աշխատանքների շարադրման ընդհանուր կառուցվածքային ու բովանդակային պահանջների (հմմտ. *Գլուխներ 1-5*) և ըստ աշխատանքների տեսակների (հմմտ. *Գլուխներ 6-7*):

Ուղեցույցի պատրաստման աշխատանքներին իրենց գործուն աջակցությունն են ցուցաբերել ԵՊՀ արաբագիտության ամբիոնի աշխատակիցները, մասնավորապես, Կ.Խոտավերդյանը, Ռ.Միրաբյանը, Հ.Քոչարյանը, Մ.Էլմասյանը, Ա.Գանիբեյանը և այլոք. տառադարձման եբրայերեն այբուբենի կազմմանն աջակցել են Ա.Հովհաննիսյանն ու Լ.Տեր-Պետրոսյանը, ում և իր շնորհակալությունն է հայտնում հեղինակը:

1. ՇԱՐԱԴՐՄԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

1.1. Ընդհանուր դրույթներ

Ուսումնական և հետազոտական աշխատանքների կատարումը ուսումնական գործընթացում միտված է, նախ և առաջ, ի ցույց դնելու ուսանողների (մագիստրանտների) մասնագիտական ունակությունները և ենթադրում է շարադրանքի, մեջբերումների, հղումների և այլնի ձևավորման որոշակի ակադեմիական ավանդույթի պահպանում: Աշխատանքի համակարգված կառուցվածքն ու նպատակային մեջբերումները կոչված են դյուրին դարձնելու վերջինիս ընկալումը:

Աշխատանքի շարադրումը ցանկալի է նախաձեռնել պլան-ժամանակացույցի (տե՛ս *Հավելված 3*) հենքի վրա, հատկապես ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի դեպքում, նիշտ գնահատելով ոչ միայն հնարավոր բացթողումների և տեխնիկական խնդիրների վերացման ժամանակատարությունը (համակարգիչների, տպիչների, այլազրման, տառատեսակների, սրբագրման և այլնի հետ կապված խնդիրներ), այլև անհրաժեշտ գրականության, սկզբնաղբյուրների որոնման ու ձեռք բերման

հետ կապված դժվարությունները, վերջիններիս մշակման աշխատատարությունը՝ հատկապես օտարալեզու մասնագիտական գրականության դեպքում:

Գիտական աշխատանքն անհրաժեշտ է և՛ մեկնագիր (1 օրինակ), և՛ MS Word կամ PDF ձևաչափի նիշերի տեսքով հանձնել ԵՊՀ արաբագիտության ամբիոն, սահմանված ժամկետների ընթացքում, հետևյալ ձևավորմամբ.

- էջաչափ՝ DIN-A4,

- տառատեսակ. հայերենի դեպքում՝ ArianAMU, Sylfaen և միայն Unicode այլագրմամբ, ռուսերենի և եվրոպական այլ լեզուների դեպքում՝ Times New Roman, արաբերենի դեպքում՝ Traditional Arabic,

- տառաչափ՝ 12 միավոր (արաբերենի դեպքում՝ 16 միավոր),

- ֆայլ՝ 1,5 տողանի էջեր,

- էջադրման չափեր՝ ձախից 3 սմ, աջից 1,5 սմ, վերևից և ներքևից 2-ական սմ,

- էջերը համարակալել ներքևի աջ անկյունում՝ 1 տեսքով:

Աշխատանքի բնույթից ելնելով՝ առաջադրվում են բուն տեխնոլոգիաներ (բացառությամբ տիտղոսաթերթի, գրականության և բովանդակության ցանկի, հավելվածների և այլն) էջային սահմանափակումներ՝ վերահիշյալ չափանիշների պահպանմամբ: Էջային նման սահմանափակումը միտված է մտերի հստակ ու սեղմ շարադրման հեղինակի ունակությունները գնահատելուն և դիտարկվում է որպես աշխատանքի կատարման բաղադրատարր:

Աշխատանքներն անհրաժեշտ է շարադրել հայերենով, բացառությամբ ամբիոնի և ավարտական աշխատանքների (մագիստրոսական թեզերի) որակավորման պետական հանձնաժողովի կողմից թույլատրված դեպքերի: Օտար լեզվով շարադրված աշխատանքներին անհրաժեշտ է կցել շարադրանքի հայերեն *սեղմագիրը*, որն ամփոփ կերպով ներկայացնելու է աշխատանքի բովանդակային կառուցվածքը՝ արվող հարցադրումները, հիմնական դրույթները, դրանց հիմնավորման համար օգտագործված փաստարկները, մեթոդը և ստացված արդյունքները: Սեղմագիրը, որը պակաս չէ ֆան ընդհանուր շարադրանքի մեկ ֆառորդը, անհրաժեշտ է տեղադրել հայերեն

տիտղոսաթերթից հետո՝ մինչև բովանդակության ցանկը՝ էջակալելով հոռմեական թվանշաններով: Այն հնարավոր է տեղադրել նաև աշխատանքի վերջնահատվածում՝ մինչև գրականության ցանկը՝ պահպանելով աշխատանքի շարունակական էջակալումը արաբական թվանշաններով: Այս դեպքում սեղմագրի մասին նշում պիտի պարունակի նաև բովանդակության ցանկը:

Հայերենով շարադրված ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ցանկալի է կցել *ամփոփագրեր* ոռուսերեն (*Резюме*) և/կամ անգլերեն (*Summary*) լեզուներով: Վերջիններս տեղադրել աշխատանքի վերջում՝ բովանդակության ցանկից և հավելվածներից հետո:

1.2. Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքի պատրաստման ընթացքում անհրաժեշտ է հենվել հետևյալ ընդհանրական կազմատիպի վրա.

- տիտղոսաթերթ,
 - բովանդակություն,
 - օգտագործված հապավումների, համառոտագրությունների, պատկերանշանների, աղյուսակների, ֆարտեզների, պատկերների և տեխնիկական այլ միջոցների ցանկ, արաբերենի (եբրայերենի, ասորերենի) տառադարձության այբուբեն,
 - բուն շարադրանք,
 - օգտագործված գրականության ցանկ,
 - հավելվածներ (բառացանկեր և այլն):
- Քոլոր ցանկերը նպատակահարմար է սկսել առանձին էջից:

1.2.1. Տիտղոսաթերթ

Ռեֆերատի, կուրսային և ավարտական աշխատանքի տիտղոսաթերթերը անհրաժեշտ է կազմել տվյալների տեղակայման հետևյալ հերթագայությամբ.

- համալսարանի, ֆակուլտետի, ամբիոնի ամբողջական անվանումը,
- աշխատանքի թեման,

- ռեֆերատի, կուրսային աշխատանքի դեպքում՝ դասընթացի անվանումը և տվյալներ ուս.տարվա և կիսամյակի մասին,

- ավարտական աշխատանքի դեպքում՝ մասնագիտացման անվանումը, մագիստրոսական թեզի դեպքում՝ մագիստրոսական ծրագրի անվանումը,

- հեղինակի ազգանուն, անուն, էլ.հասցե, ուս.տոմսի համարը,

- գիտական ղեկավարի անունը, ազգանունը և գիտական կոչումը,

- աշխատանքի հանձնման ամսաթիվը:

Տիպոգրաֆերթի նմուշներ կարելի է գտնել սույն ուղեցույցի հավելվածում (տե՛ս Հավելված 1):

1.2.2. Բովանդակություն

Աշխատանքի կառուցվածքային մասնատումը ցուցադրվում է Բովանդակության միջոցով, որով և ի հայտ է բերվում աշխատանքի շարադրանքի տրամաբանական հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը. այն սուկ հանգուցաբառերի թվարկում չէ:

Աշխատանքի մասնատման խորությունը պայմանավորված է աշխատանքի բնույթով և ծավալով: Բովանդակության ցանկի միևնույն աստիճանում գտնվող կետերը արտացոլելու են շարադրանքի բովանդակային առումով միևնույն մակարդակի վրա գտնվող դրույթների հերթագայությունը:

Շարադրանքի մասնատման ու բովանդակության ցանկի կազմման ընթացքում անհրաժեշտ է խուսափել այնպիսի վերնագրի կամ ենթավերնագրի առկայությունից, որը լիովին համապատասխանում է աշխատանքի անվանմանը: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել գլուխների վերնագրերի, ենթավերնագրերի հստակ ձևակերպումների վրա:

Բովանդակության ցանկում յուրաքանչյուր կետի դեպքում նախընտրելի է նվազագույնը երկու ենթակետի առկայություն, որը հնարավորություն կտա խուսափել առաջադրվող դրույթների միակողմանի լուսաբանումից: Մասնատման հետևյալ օրինակն անթույլատրելի է՝

3.3.1. Հիմնադրույթ «Ա»

3.3.1.1. Հիմնադրույթ «Ա-ի» առավելությունները

3.3.2. Հիմնադրույթ «Բ»

Նախընտրելի է հետևյալը՝

3.3.1. Հիմնադրույթ «Ա»

3.3.1.1. Հիմնադրույթ «Ա-ի» առավելությունները

3.3.1.2. Հիմնադրույթ «Ա-ի» թերությունները

3.3.2 Հիմնադրույթ «Բ»

Ցանկալի է չգերազանցել ֆառաստիճան ենթամասնատումը:

Համառոտագրությունների, հապավումների, պատկերանշանների, աղյուսակների և պատկերների ցանկերը կարող են համարակալվել հոռմեական թվանշաններով, եթե դրանք նախորդում են բուն շարադրանքին: Բուն շարադրանքի հատվածը, գրականության ցանկը, ինչպես նաև հետադաս համառոտագրությունների, պատկերանշանների, աղյուսակների և պատկերների ցանկերը համարակալվելու են շարունակաբար, արաբական թվանշաններով, ընդ որում՝ բուն շարադրանքի առաջին էջը համարակալվելու է որպես 1:

Տեքստի մասնատման և էջերի համարակալման օրինակ.

<u>Բովանդակություն</u>	էջեր
Համառոտագրությունների, հապավումների ցանկ	II
Պատկերանշանների ցանկ	III
Աղյուսակների ցանկ.....	V
1. Գլուխ (մասնատման 1-ին աստիճան)	1
1.1. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան)	3
1.1.1. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան).....	5
1.1.2. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան).....	8
1.2. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան)	12
2. Գլուխ (մասնատման 1-ին աստիճան)	14
2.1. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան)	15
2.1.1. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան).....	18
2.1.2. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան).....	21
2.2. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան)	25

3. Գլուխ (մասնատման 1-ին աստիճան) 28

 3.1. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան) 31

 3.1.1. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան)..... 35

 3.1.2. Ենթա-ենթագլուխ (մասնատման 3-րդ աստիճան)..... 39

 3.2. Ենթագլուխ (մասնատման 2-րդ աստիճան) 41

Օգտագործված գրականության ցանկ..... 44

1.2.3. Օգտագործված հապավումների, աղյուսակների, քարտեզների, պատկերների ցանկ

Բուն շարադրանքում, տողատակերում, գրականության ցանկում, աղյուսակներում, ֆարտեզներում և այլն օգտագործված համառոտագրությունները, պատկերանշանները, հապավումները պետք է տեղադրել *Համառոտագրությունների, հապավումների և պատկերանշանների ցանկում*⁴ սահմանելով դրանք նաև շարադրանքի ընթացքում առաջին անգամ օգտագործելիս. այսպես, օրինակ, «հմմտ.» – համեմատիք, «նշվ. աշխ.» – նշված աշխատություն, «Աղ.» – Աղյուսակ, «ZDMG» – Zeitschrift für deutsche morgenländische Gesellschaft և այլն:

Տեխտում աղյուսակների, ֆարտեզների, պատկերների էջային տվյալները անհրաժեշտ է ներկայացնել *Աղյուսակների, պատկերների (և այլն) ցանկի* մեջ: Թե՛ աղյուսակները և թե՛ պատկերները պիտի անվանվեն և համարակալվեն շարունակական կերպով՝ ըստ անման կարգի: Աղյուսակի կամ պատկերի ներքևում պետք է նշել աղբյուրը, նաև հեղինակային խմբագրման աղյուսակների և պատկերների դեպքում:

Աղյուսակ 1. Անվանում

Աղյուսակ կամ պատկեր

Աղբյուր՝ Աղբյուրի անվանում

Աղյուսակները և պատկերները ցանկալի է ներառել ընթացիկ շարադրանքի մեջ և միայն ծայրահեղ դեպքերում տեղադրել առանձին՝ հավելված-

ներում: Աշխատանքը կշահի, եթե անմիջական կապ ապահովվի ընթացիկ շարադրանքի տրամաբանության և աղյուսակների ու պատկերների միջև:

1.2.4. Բուն շարադրանք. բովանդակային և ռճային պահանջներ

Անհրաժեշտ է պահպանել շարադրանքի ներկայացման դասական եռաստիճան կառուցվածքը՝ ներածական հատված, բուն շարադրանք և եզրակացություններ (եզրահանգումներ, վերջաբան): Կարևոր է այս երեք հատվածների բովանդակային հստակ փոխկապակցվածությունը:

Ներածության մեջ սղագրվում է հետազոտության ընդհանուր ընթացքը: Այստեղ հեղինակը հստակեցնում և սահմանազատում է հետազոտության առարկան, ներկայացնում աշխատանքի նպատակի և մեթոդական կառուցվածքի մասին սեփական դիտարկումները՝ հիմնական շեշտը դնելով ընտրված թեմայի յուրահատկությունների պարզաբանման ու մեկնաբանման վրա: Առավել լայն համատեմստում փաստարկվում է նաև թեմայի ընտրության հիմնավորվածությունը, աշխատանքի հենմային հարցադրման (հարցադրումների) կարևորությունը, վերջինիս արդիականությունը, գիտական հետաքրքրությունը: Աշխատանքի այս հատվածում հնարավոր է ներգրավել նաև հարցադրման ուսումնասիրության պատմագրությունը, եթե ներկայացվող պատմական մոտեցումները հետագա շարադրանքի ընթացքում գնահատվելու են հեղինակի կողմից և նպաստելու հարցադրման և հեղինակային գաղափարների ու մոտեցումների համակողմանի ընկալմանը:

Շարադրանքի հաջորդ գլուխներում մանրամասնորեն դիտարկվում և ֆննարկվում են առաջ ֆաշվող հարցադրման (հարցադրումների) կենտրոնական դրույթները: Կարևոր է, որ հեղինակն այստեղ կարողանա ներկայացնել, վեր հանել ու հիմնավորել այն ամենը, ինչ նախանշվել է աշխատանքի ներածական հատվածում: Նմանօրինակ փոխհամաձայնեցման բացակայությունը անհնարին է դարձնելու շարադրանքի կոտ փաստարկային շղթայի ստեղծումը:

Շարադրանքի ամփոփիչ հատվածում հեղինակն ի մի է բերում ֆննարկված մոտեցումները, փաստարկները, մեկ անգամ ևս մանրամասնորեն թվարկում բոլոր այն դրույթները, որոնք արդեն իսկ շարադրվել ու ֆննվել են:

Այստեղ կարող են վեր հանվել նաև աշխատանքում սպառիչ կերպով շուսաբանված ու տակավին վիճարկելի մնացող հարցադրումներ:

Աշխատանքի հենմային հարցադրմանը (հարցադրումներին) առնչվող ներգրավված մասնագիտական գրականության մեջ արտացոլված մոտեցումներից յուրաքանչյուրի հիմնավորվածությունն ու հավաստիությունը ստուգվում է աշխատանքի հեղինակի կողմից: Շարադրանքի այսօրինակ ունը ենթադրում է դիմադիր տեսակետ արտահայտելու, գրախոսելու կամ ընդդիմախոսելու հեղինակային համարձակություն: Մասնով իսկ հեղինակին հնարավորություն է ընձեռվում ի ցույց դնել հարցադրման ընկալման սեփական կարողությունները, վերլուծական և քննադատական ունակությունները:

Սեփական մոտեցումներն անհրաժեշտ է խնամքով հիմնավորել և մանրամասնորեն շարադրել: Սկզբումբոլե կարևոր է պահպանել հիմնավորումների համոզիչ փոխկապակցվածություն՝ ապահովելով փաստարկների կոտ, հստակ ու ավելորդություններից զուրկ հաջորդականություն: Անհրաժեշտ է պարզաբանել փաստարկների բոլոր կառուցատարրերը, անգամ եթե դրանք հեղինակի համար «չափազանց պարզունակ» ու «ինքնին հասկանալի» են: Թեմային կամ հարցադրմանն առնչվող այլընտրանքային մոտեցումները, որոնք, սակայն, չի կիսում հեղինակը, նույնպես պետք է հիշատակել ու ներկայացնել: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է լրացուցիչ, տողատակում կամ ծանոթագրության տեսքով, հիմնավորել, թե ինչու հեղինակը չի կիսում այդ մոտեցումները:

Կարևոր է մասնագիտական տերմինային և հասկացական գործիքակազմի միօրինակության պահպանումն ու նշգրիտ օգտագործումը շարադրանքի ամբողջ ընթացքում՝ խոսասփելով, օրինակ, մի դեպքում *թեքում*, մյուս դեպքում *հոլով*, մի դեպքում՝ *ուղղական հոլով*, մյուսում՝ *–Ա թեքում* և այլ տերմինային ոչ համարժեք զույգերի օգտագործումից: Վերջին օրինակի պարագայում հասկացական տարբեր բովանդակություն է պարունակում տերմիններից յուրաքանչյուրը: Մասնագիտական ձևակերպումների (տեխնիկական գործիքակազմի – Termini tecnici) առկայության դեպքում նախընտրելի է վերջինների օգտագործումը (օրինակ՝ *մուսուլմանական*, փոխարեն *մահմեդականի*):

Անհրաժեշտ է պահպանել հայերեն շարադրանքի ուղղագրական, ֆեռականական և կետադրական կանոնները: Հանախակի սխալների առկայությունը բացասական տպավորություն է ստեղծելու կատարված աշխատանքի նկատմամբ: Աշխատանքն անհրաժեշտ է շարադրել գրական բարձր ոճով՝ խուսափելով առօրյա-խոսակցական ձևակերպումներից, դատարկաբանություններից, կրկնաբանություններից, բարձրահունչ պնդումներից և այլն:

Շարադրանքի ընթացքում օգտագործվող պատկերանշանների, համատոտագրությունների, արդի գրական և դասական արաբերենի, եբրայերենի տառադարձության այբուբենի ձևավորման մասին տե՛ս *Գլուխ 2.1.*: Հղումների, ուղղակի, անուղղակի, միջնորդավորված մեջբերումների ձևավորման մասին տե՛ս *Գլուխ 2.2.*:

1.2.5. Հավելվածներ (բառացանկեր, տերմինաբանական բառարաններ և այլն)

Տարատեսակ հավելվածների առկայության անհրաժեշտությունը աշխատանքում հիմնավորված է միայն այն դեպքերում, եթե դրանք օգնելու են ավելի խորը հասկանալ աշխատանքի էությունը և, ելնելով ձևավորման առանձնահատկություններից, չեն կարող ներգրավվել բուն շարադրանքի մեջ աղյուսակների, պատկերների և այլնի տեսքով:

Բառացանկերի, տերմինաբանական բառարանների, դասիչների կազմումը խրախուսվում է հատկապես սկզբնաղբյուրների մեկնաբանական ընթերցումների վրա հիմնված աշխատանքներում:

1.2.6. Օգտագործված գրականությունից ցանկ

Աշխատանքին կցվող գրականության ցանկը պարունակում է և՛ ուղղակի կերպով մեջբերված, և՛, որ պարտադիր է, նաև անուղղակի կերպով օգտագործված աղբյուրները: Գրականության ցանկը կազմվելու ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ձևավորման հետևյալ կանոնները (տե՛ս նաև նմուշ-օրինակները).

– օգտագործված աղբյուրները գրականության ցանկում ցանկալի է տարանջատել *Սկզբնաղբյուրներ* (Primary sources) և *Հարակից աղբյուրներ* (Secondary sources) հատվածների:

- Հայալեզու, ռուսալեզու, եվրոպական տարբեր լեզուներով, արաբերենով ու եբրայերենով աղբյուրները դասավորել առանց որևէ ենթավերնագրային տարանջատման՝ ըստ հեղինակի ազգանվան սկզբնատառերի այբբենական կարգի:

- Միևնույն հեղինակի մեկից ավելի աշխատանքների առկայության դեպքում դրանք դասավորել ժամանակագրային կարգով:

- Օգտագործել *ա, բ, գ (a, b, c; a, b, c,)* և այլ դասիչները միևնույն հեղինակի նույն տարում հրատարակված երկու և ավելի աշխատությունների դեպքում: Դասիչները պետք է համապատասխանեն աղբյուրի հրատարակման լեզվին:

- Միևնույն ժողովածուից մեջբերվող մեկից ավելի հոդվածների դեպքում տվյալ ժողովածուն ևս ընդգրկել *Օգտագործված գրականության ցանկի* մեջ առանձին տողով՝ ելնելով խմբագրի ազգանվան սկզբնատառի այբբենական հերթագայությունից, իսկ հոդվածների մատենագիտական տվյալները նշելիս հղել արդեն ժողովածուն:

- Աղբյուրներում նշել հեղինակների անվան, իսկ ռուսալեզու և հայալեզու աղբյուրների դեպքում նաև հայրանվան, սկզբնատառերը՝ խուսափելով ամբողջական անունների օգտագործումից: Հեղինակի երկրորդ անունը կամ նրա անվան սկզբնատառերը օգտագործել ճիշտ այնպես, ինչպես ինքը՝ հեղինակն է այն օգտագործում: Ամբողջական անունները կրճատվելու են նաև հրատարակությունները նշելիս՝ E.J. Brill, O.Harrassowitz, J.Benjamins:

- Օգտագործել ամսագրերի ամբողջական անվանումները, և ոչ թե դրանց հապավումները. Zeitschrift für deutsche morgenländische Gesellschaft ZDMG-ի փոխարեն:

- Յուրաբանչյուր գրառում գրականության ցանկում պարունակելու է հետևյալ տարրերը՝ համապատասխան հերթագայությամբ և ձևավորմամբ: Օգտագործվելու են աղբյուրի լեզվին համապատասխան կետադրական նշաններ (հմմտ. նմուշ-օրինակները).

Մենագրություն. Հեղինակի ազգանուն անուն հայրանուն, համահեղինակների ազգանուն անուն հայրանուն, (Հրատարակության

տարեթիվ), *Մենագրության ամբողջական վերնագիր և ենթավերնագիր*, Հրատարակության տեղ, Հրատարակիչ:

Հոդված ամսագրում. Հեղինակի ազգանուն անուն հայրանուն, համահեղինակների ազգանուն անուն հայրանուն, (Հրատարակության տարեթիվ), «Հոդվածի ամբողջական վերնագիր և ենթավերնագիր», *Ամսագրի ամբողջական անվանում* ամսագրի համարը. հոդվածի առաջին էջ-հոդվածի վերջին էջ:

Հոդված ժողովածուի մեջ. Հեղինակի ազգանուն անուն հայրանուն, համահեղինակների ազգանուն անուն հայրանուն, (Հրատարակության տարեթիվ), «Հոդվածի ամբողջական վերնագիր և ենթավերնագիր», *Ժողովածուի վերնագիրը*, խմբագիր(ների) անուն հայրանուն ազգանուն, հոդվածի առաջին էջ-հոդվածի վերջին էջ, Հրատարակության տեղ, Հրատարակիչ:

Համացանցային աղբյուրներ. Հեղինակի ազգանուն անուն հայրանուն, համահեղինակների ազգանուն անուն հայրանուն, *Աղբյուրի ամբողջական վերնագիր և ենթավերնագիր*, (Համացանցային հղում: Հղումից օգտվելու ամսաթիվ-ամիս.տարեթիվ):

Գրախոսություններ. Գրախոսի ազգանուն անուն հայրանուն, (Գրախոսության հրատարակության տարեթիվ), Գրախոսություն՝ Գրախոսվող նյութի մատենագիտական տվյալները վերոհիշյալ ձևավորումներին համապատասխան, ըստ նյութի բնույթի, գրախոսվող նյութի հրատարակության տարեթիվ, էջերի ֆանակ, գին, ISBN (ISSN). Գրախոսության մատենագիտական տվյալներ:

– Տվյալները հրատարակության տարեթվերի և էջերի մասին կրճատել պետք է՝ 152-172 և ոչ թե 156-72-ի, 1994-1995 և ոչ թե 1994-5:

– Հրատարակության տեղի, խմբագիրների մասին նշումները համապատասխանելու են աղբյուրի հրատարակման լեզվին՝ Մոսկվա, Москва, Moskau, Moscow և այլն. խմբ., под ред., hrsg. von, ed. by և այլն:

– Սկզբնաղբյուրներում, որտեղ բացակայում են տվյալները խմբագրի և հրատարակության տարեթվի վերաբերյալ, անհրաժեշտ է ավելացնել *առանց խմբագրի* (no editor, ohne Herausgeber), *առանց տարեթվի* (no date, ohne Jahr) նշումները:

በሥነ ግጥም ስርዓት

- Arnold, Werner und Behnstedt, Peter. (1993). *Arabisch-Aramäische Sprachbezeichnung im Qalamūn (Syrien)*. Wiesbaden: O.Harrassowitz.
- Baalbaki, Ramzi. (1979). "Some aspects of harmony and hierarchy in Sībawayhi's grammatical analysis". *Zeitschrift für arabische Linguistik* 2.7-22.
- Bohas, Georges. (1995). "Au delà de la racine". *Proceedings of the Colloquium on Arabic Linguistics Bucharest August 29-September 2, 1994*, ed. by Nadia Anghelescu and Andrei A. Avram, 29-45. Bucharest: University of Bucharest.
- Callataÿ, Godefroid de. *The Classification of the Sciences according to the Rasa 'il Ikhwan al-Safa'*. The Institute of Ismaili Studies. Université Catholique de Louvain. (URL: <http://ismaili.net/histoire/history04/history428.html>, Date of access: 17.04.2007).
- Eid, Mushira (ed.). (1990). *Perspectives in Arabic linguistics*, I. Amsterdam and Philadelphia: J.Benjamins.
- Greenberg, Joseph H. (1947). "Arabic loan-words in Hausa". *Word* 3.85-97.
- Heath, Jeffrey. (1989). *From code-switching to borrowing: A case study of Moroccan Arabic*. London and New York: Kegan Paul International.
- Lambton, Ann K.S. (1961). *Persian Grammar*. Cambridge: Cambridge University press.
- Nothier, Jacomien. (1989). *Dutch and Moroccan Arabic in contact: Code-switching among Morroccans in the Netherlands*. Ph.D. thesis, University of Amsterdam.
- Osman, Mariam H. (1990). "Bound anaphora in Egyptian Arabic". Eid (1990:155-172).
- Owens, Jonathan. (1989a). "The Syntactic Basis of Arabic Word Classification". *Arabica* 36.211-234.
- _____. (1989b). „Zur Pidginisierung und Kreolisierung im Arabischen“. *Afrika und Übersee* 72. 91-107.

Vanhove, Martine. (1988). Review of: Manwel Mifsud, *Loan verbs in Maltese: A descriptive and comparative study*, Leiden: E.J. Brill, 1995. *Arabica* 45.144-149.

Белова, А.Г. (1991). «Морфемы в семитских языках (на материале арабского)». Вардуль (1991:177-219).

_____. (2003). *Введение в арабскую филологию*. Москва: Институт Востоковедения РАН.

Булыгина, Т.В. (1980). «Грамматические и семантические категории и их связи». *Аспекты семантических исследований*, под ред. Н.Д. Арутюновой и А.А. Уфимцевой, 320-355. Москва: Наука.

Вардуль, И.Ф. (ред.). (1991). *Морфемы и проблемы типологии*. Москва: Наука.

Габучан, Г.М. (2000). *Арабское словоизменение*. Автореф. докт. дисс., Москва, ИСАА.

Лебедев, В.В. (1987). Рец. на кн.: Халидов, А.Б. *Арабские рукописи и арабская рукописная традиция*. Москва: Наука, 1985. 303 с. *Народы Азии и Африки* 6.184-187.

Мельчук, И.А. (1963). «К вопросу о «внутренней флексии» в индоевропейских и семитских языках». *Вопросы языкознания* 4.27-40.

Фролов, Д.В. (1973). *Теория предлогов в традиционной арабской грамматике*. Автореф. канд. дисс., Москва, ИСАА.

Ջահուկյան, Գ. Բ., (1972), Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Օգտագործվող գրականության նվազագույն ցանկ չի պահանջվելու սակայն մասնագիտական գրականությունը պիտի խնամֆով մշակվի և ներգրավվի:

2. ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2.1. Օգտագործված պատկերանշանների, համառոտագրությունների, տառադարձության այբուբենների ձևավորմանը ներկայացվող պահանջներ

Մաթեմատիկական կամ տրամաբանական բանաձևերում, հավասարումներում օգտագործված նշանները տեղադրել պատկերանշանների ցանկում: Ի լրումն, այդ իսկ պատկերանշաններն անհրաժեշտ է բացատրել նաև բուն շարադրանքի մեջ առաջին անգամ հանդիպելիս: Պատկերանշանների ցանկը հնարավոր է միավորել նաև համառոտագրությունների և հապավումների ցանկի հետ՝ *Պատկերանշանների, համառոտագրությունների և հապավումների ցանկ վերտառությամբ*:

Ձևակ-ձևակ թարգմանության (morph-by-morph translation) դեպքում, անհրաժեշտ է հետևել Thomas E. Payne, *Description of morpho-syntax: A guide for field-linguistics*, Cambridge: Cambridge University Press, 1997 մենագրությունում առաջարկվող տարբերակին (հմմտ. *Հավելված 2*):

Դուրանից մեջբերումները անհրաժեշտ է ձևավորել հետևյալ կերպ՝ Դ.14/13, Q.14/13, K.14/13 (այսինքն՝ 14-րդ սուրա, 13-րդ այաթ): Համարակալման ընթացքում հետևել Դուրանի Կահիրեի խմբագրությանը:

Հիջրայի տարեթվերը մեր թվարկության տարեթվերից տարանջատել աջ թե՛ գծի միջոցով / օգտագործելով Հիջ., մ.թ., մ.թ.ա. կամ Ք.ա., Ք.հ. հապավումները:

Արաբական անձնանունները շարադրանքում առաջին անգամ մեջբերել անվան հետևյալ հաջորդականությամբ՝ *kunya, ism, nasab, laqab*, փակագծերում տեղադրելով վերջիններիս նաև տառադարձված տարբերակը. այսպես, օրինակ, Ալլա ադ-Դին Աբու Մուհամմադ Ահմադ իբն Մուհամմադ ալ-Բադդադի (‘Alā’ ad-Dīn ‘Abū Muḥammad ‘Aḥmad ibn Muḥammad al-Baḡdādī): Նույն անվան հետագա հիշատակումների դեպքում օգտագործել միայն նրա հանրաճանաչ անունը (*šuhra*)՝ Ալ-Բադդադի: Մահվան տարեթվերը ցանկալի է նշել նախ ըստ հիջրայի և ապա ըստ մեր թվարկության՝ Իբն Հազմ (Ibn Hazm) (մահ., d., gest., yM. 456/1064):

Արդի գրական և դասական արաբերեն մեջբերումները, օրինակները և այլն տառադարձել՝ հետևելով առաջարկվող տարբերակներից որևէ մեկին¹.

Քաղաձայններ

Այբուբեն	Գրանշան				
	IPA	EALL	DMG	Լոեյյայն	Հայերեն
ب, <i>bā'</i>	b	b	b	b	բ
ت, <i>tā'</i>	t	t	t	t	թ
ث, <i>ṯā'</i>	θ	<u>t</u>	<u>t</u>	θ	ս
ج, <i>jīm</i>	j	j	ǧ	j	ջ
ح, <i>ḥā'</i>	ħ	ḥ	ḥ	ħ	հ
خ, <i>xā'</i>	x	x	ḫ	x	խ
د, <i>dāl</i>	d	d	d	d	դ
ذ, <i>ḏāl</i>	ð	<u>d</u>	<u>d</u>	ð	դ
ر, <i>rā'</i>	r	r	r	r	ռ/ <i>r</i> ²
ز, <i>zāyn</i>	z	z	z	z	զ
س, <i>sīn</i>	s	s	s	s	ս
ش, <i>šīn</i>	ʃ	š	š	ʃ	շ
ص, <i>ṣād</i>	ʃ/s ³ , s ^x	ʃ	ʃ	ʃ	ս
ض, <i>ḏād</i>	d'/d ³ , d ^x	ḏ	ḏ	ḏ	դ
ط, <i>ṭā'</i>	ṭ/t ³ , t ^x	ṭ	ṭ	ṭ	տ
ظ, <i>ḏā'</i>	ḏ/ḏ ³ , ḏ ^x	ḏ	ḏ	ḏ	զ
ع, <i>ʿayn</i>	ʿ	ʿ	ʿ	ʿ	-
غ, <i>ġayn</i>	ġ	ġ	ġ	ġ	ղ
ف, <i>fā'</i>	f	f	f	f	ֆ
ق, <i>qāf</i>	q	q	q	q	կ ³
ك, <i>kāf</i>	k	k	k	k	ֆ
ل, <i>lām</i>	l	l	l	l	լ

¹ EALL (Encyclopedia of Arabic Language and Linguistics), DMG (Deutsche morgenländische Gesellschaft) և «Լոեյյայն» տառադարձումների ղեկավար նախընտրելի է *Gentium* տառատեսակը: IPA (International Phonetic Association) գրադարձական-հնչույթագրական այբուբենը կիրառելու ղեկավար օգտագործել *SILDoulosIPA* կամ *Gentium* տառատեսակը: Տառատեսակները հարցնել ամբիոնում կամ ներբեռնել համացանցից:

² Բառակազմում տառադարձվելու է որպես /ռ/. մնացյալ բոլոր ղեկավարում՝ որպես /ր/:

³ Բացառությամբ «Լուրան» տարբերակի:

م, mīm	m	m	m	m	մ
ن, nūn	n	n	n	n	ն
ه, hā'	h	h	h	h	հ
ء, hamza	ʔ	ʻ	ʻ	ʔ	-

Ձայնավորներ, ձայնորդներ և երկբարբառներ

		IPA	EALL	DMG	Լոեյլայն	Հայերեն
Կարճ ձայնավորներ	ا	a	a	a	a	ա
	و	u	u	u	u	ու
	ي	i	i	i	i	ի
Երկար ձայնավորներ	آ	a:	ā	ā	aa	ա
	و	u:	ū	ū	uw	ու
	ي	i:	ī	ī	iy	ի
Ձայնորդներ	و	w	w	w	w	վ/ու ⁴
	ي	y	y	y	y	յ
Կրկնվող ձայնորդ	و	uww	uww	uww	uww	ու
	ي	iyy	iyy	iyy	iyy	ի
Երկբարբառներ	ي	ay	ay	ay	ay	այ
	اي	a:y	āy	āy	aay	այ
	و	aw	aw	aw	aw	աու
	او	a:w	āw	āw	aaw	աու

Մինչև աշխատանքի շարադրումը, հատկապես բարբառագիտական աշխատանքներում, անհրաժեշտ է գիտական ղեկավարի հետ համաձայնեցնել տառադարձության առաջարկվող այբուբենների այս կամ այն տարբերակը: Լրացուցիչ տարոտոշիչ (դիակրիտիկ) նշանների օգտագործման, ինչպես նաև [գրադարձության] կամ /հնչյութագրության/ անհրաժեշտության ղեկավար հետևել միջազգային հնչյունաբանական ընկերության (ՄՀԸ - IPA) գրադարձական-հնչյութագրական այբուբենին (հարցնել ամբիոնում կամ ներքեննել համացանցից): Բոլոր տառադարձումներն անհրաժեշտ է շեղարկել, բացառությամբ հատուկ անունների:

⁴ Բառակցում տառադարձվելու է որպես /վ/. մնացյալ բոլոր դեպքերում՝ որպես /ու/:

Արդի գրական և դասական արաբերենի տառադարձման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նաև հետևյալ կանոնները՝

- *համզան* բառասկզբում մշտապես տառադարձվում է,
- որոշյալ հոդը տառադարձվում է առնմանված տարբերակով և հաջորդող բառից անջատվում ենթամնայով՝ *aš-šams*,
- *bi-, li-, wa-* և այլն, գրվում են հաջորդող բառին կցված՝ անջատվելով վերջինից ենթամնայով,

- *wasla-*ն չի տառադարձվելու՝ *wa-l-faras*,

- թեֆական վերջավորությունները տառադարձվելու են միայն ֆեռականորեն հիմնավորված համատեքստում: Անունները օգտագործվելու են դադարային ձևերով՝ առանց թեֆական վերջավորությունների և կցական ձայնավորների. հմմտ.՝ *min al-bayt, hum al-mu'minūna*: Բայերի դեպքում, ընդհակառակը, պահպանվելու են վերջին ձայնանիշները. հմմտ.՝ *kataba, yaktubu*: Դերանվանական վերջածանցները պահպանելու են ամբողջական (ոչ դադարային) տառադարձումը. հմմտ.՝ *kitābu-hu* և ոչ թե *kitābu-h*:

- Իգականի վերջավորությունը տառադարձվելու է որպես *-a* (և ոչ որպես *-ah*), բացառությամբ լծորդված կառույցների, որտեղ այն տառադարձվելու է որպես *-at*. հմմտ.՝ *al-warda, al-warda al-jamīla*, սակայն՝ *wardat al-bint*:

Տառադարձության հայերեն այբուբենը օգտագործվելու է միայն բուն շարադրանքի ընթացքում հատուկ անունների, անձնանունների, տեղանունների, աշխարհագրական այլ անվանումների տառադարձման համար: Տառադարձման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները՝

- տառադարձվող բոլոր հատուկ անունները սկսվում են մեծատառով,
- *համզան* /ʔ/, *այնը* /ʕ/, *վասլան* և թեֆական վերջավորությունները չեն տառադարձվելու,
- որոշյալ հոդը տառադարձվելու է առնմանված տարբերակով և հաջորդող բառից անջատվելու է ենթամնայով՝ *ատ-Տաբարի, ազ-Ջաջաջի*,
- *Աբու* նախադրությամբ (*kunya*) հատուկ անունները տառադարձել հետևյալ կերպ՝ Աբու-լ-Կասիմ, Աբու-լ-Ասուադ:

Երայերեն մեջբերումները, օրինակները և այլն տառադարձել՝ հետևելով առաջարկվող տարբերակին⁵.

Այբուբեն	Գրանշան	
Ձայնավորներ		Տարրորոշիչ նշանների անվանումներ
	a	<i>kamats, patah, hataf-patah</i>
	e	<i>segol, tsere</i> և <i>shwa</i>
	i	<i>hirik</i>
	o	<i>holam, kamats katan</i>
	u	<i>kubuts, shuruk</i>
Երկբարբառներ		
	ay	օր.՝ <i>pnay, alay</i>
	oy	օր.՝ <i>noy, goy</i>
	ey	բառավերջում, օր.՝ <i>more</i> (եգ.) - <i>morey</i> (հոգն. լծորդված)
	uy	օր.՝ <i>panuy, asuy</i>
Բաղաձայններ		
א, <i>alef</i>	-	չի տառադարձվելու կամ տառադարձվելու է որպես ձայնավոր, օր.՝ <i>raa, tire, af, ered, hevi, nasu</i>
ב, <i>bet</i>	B b	օր.՝ <i>bolet, aba, hilbisha</i>
ב, <i>vet</i>	V v	օր.՝ <i>ahuv, shovav, misaviv</i>
ג, <i>gimmel</i>	G g	օր.՝ <i>gamar, nagar, boreg</i>
ד, <i>daled</i>	D d	օր.՝ <i>delet, yidrosh, rakad</i>
ה, <i>heh</i>	H h	օր.՝ <i>halakh, herim, yaharos</i>
ו, <i>vav</i>	V v	օր.՝ <i>ve#, viter, givum, vav</i>
ז, <i>zayin</i>	Z z	օր.՝ <i>zar, muzar, brozeg</i>
ח, <i>het</i>	H h	օր.՝ <i>halom, mahak, mahar, patah</i>
ט, <i>tet</i>	T t	օր.՝ <i>teva', matbe'a, moret</i>
י, <i>yod</i>	Y y	օր.՝ <i>yarad, tayar, siyer</i>

⁵ Տառադարձման այս տարբերակը մշակվել է Թեյ-Ավիվի համալսարանի լեզվաբանության ֆակուլտետի Բերմանի լաբորատորիայի և Լեզվի ակադեմիայի կողմից: Այն հիմնված է իսրայելական երայերենի արտասանական առանձնահատկությունների վրա և ներկայացվում է որոշ փոփոխություններով: Տառադարձման դեպքում նախընտրելի է օգտագործել *Gentium* տառատեսակը:

כ, <i>kaf</i>	K k	or.՝ <i>kelev, maka</i>
כּ, <i>khaf</i>	Kh kh	or.՝ <i>nikhva, makhar, makhbesa, masakh</i>
ל, <i>lamed</i>	L l	or.՝ <i>lilmod, melah, nafal</i>
מ, <i>mem</i>	M m	or.՝ <i>matsa, limtso, lit'om</i>
נ, <i>nun</i>	N n	or.՝ <i>nudnik, anahnu, katan</i>
ס, <i>samekh</i>	S s	or.՝ <i>soleah, pasim, namas</i>
ע, <i>ayin</i>	ʾ	տառադարձել համաձայն ուղղագրության, or.՝ <i>'omed, 'elbon, ne'emad, masa', tav'a (~ 'սուզվեց (իգ.)'), tava' (~ 'սուզվեց (ար.)')</i>
פ, <i>pe</i>	P p	or.՝ <i>pe, pitput, hop</i>
ף, <i>fe</i>	F f	or.՝ <i>fibrek, filosof, mefits, mafria', hatsuf</i>
צ, <i>tsade</i>	Ts ts	or.՝ <i>tsodek, matsa, hetsits</i>
ק, <i>kof</i>	K k	or.՝ <i>kol, kafats, makom, tsodek</i>
ר, <i>resh</i>	R r	or.՝ <i>rosh, para, tofer</i>
ש, <i>shin</i>	Sh sh	or.՝ <i>shama', hashuv, lavash</i>
שׁ, <i>sin</i>	Ś ś	or.՝ <i>šone, mašua</i>
ת, <i>taf</i>	T t	or.՝ <i>tafas, menateah</i>
Փոխառյալ բառերում		
ג	Ġ ġ	or.՝ <i>ġuk, ġins, piġama</i>
צ	Ts' ts'	or.՝ <i>ts'upar, rits'rats'</i>
ז	Ž ž	or.՝ <i>bež, garaž</i>

Երբայերենի տառադարձման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նաև հետևյալ կանոնները՝

- ה, *heh*-ը բառավերջում չի տառադարձվելու, or.՝ *ratsa* ~ 'ցանկացավ (ար.)' ~ 'վազում է (իգ.)', եթե իմաստագատիչ չէ, հմմտ. *lo* ~ 'նրան (ար.)', սակայն *loh* ~ 'նշ', *bo* ~ 'նրա մեջ (ար.)', սակայն *boh* ~ 'արի',

- bagad-kapat խմբի բաղաձայնները բառասկզբում տառադարձել պայթական /b, p, k/ և ոչ թե շփական /v, f, x/ տարբերակներով. հմմտ. *ets we# bayit*, սակայն *u# vayit*,

- որոշյալ հոդը և կցական նախդիրները հաջորդող բառից անջատվելու են համար # գրանշանով և բացատով, or.՝ *ha# bayit sheli, be# Tel-Aviv, le# makom aher, me# ha# bayit*, բացառությամբ *habayta* ձևի,

- կցական նախդիրները չեն տարանջատվելու անձնական դերանուններից, օր.՝ *mimenu, itanu, etslam, alay*, և հաջորդող բառից որոշ փառացած բառակապակցություններում, օր.՝ *bimkom, birtsinut*,

- համար # գրանշանով և բացատով հաջորդող բառից տարանջատվելու են նաև կցական շաղկապները, օր.՝ *ve# ani hoshev she# hu meod nehmad kshe# hu yashen*,

- *makef* գրանշանը տառադարձել ենթամնայով,

- լծորդված կապակցության (*smikhut khavura*) բաղադրիչները կապակցվելու են գումարման նշանի միջոցով, օր.՝ *beyt+sefer, na'al+bayit, shulhan+ktiva, trumat+ha#nadv*,

- համառոտագրությունները և հապավումները տառադարձել ամբողջական ձևով, օր.՝ *ב"ב - beyt+sefer*,

- հատուկ անունները տառադարձել մեծատառով, օր.՝ *Asaf, Hagar, Tel-Aviv*:

Գիտական ղեկավարի հետ լրացուցիչ համաձայնեցնել եբրայերենի իւրայելական, աշխենագական, սեֆարդական, յեմենական, տիբերական և վերականգնված միջնադարյան ու աստվածաշնչյան գրադարձական այբուբենների օգտագործման անհրաժեշտությունը (տե՛ս *Հավելված 5*):

2.2. Ծանոթագրությունների, մեջբերումների և հղումների ձևավորմանը առաջադրվող պահանջներ

2.2.1. Ծանոթագրություններ

Շարադրանքի այս կամ այն դրույթին առնչվող ծանոթագրությունները, այդ թվում նաև հեղինակային, սեփական նկատառումները, տեխնիկական բնույթի մեջբերումները, ընթացիկ շարադրանքի հետ սերտորեն շաղկապող կամ սկզբնաղբյուրից մեջբերվող հատվածները և այլն, որոնք նախընտրելի է տեղադրել բուն շարադրանքի մեջ, անհրաժեշտ է տեղադրել համարակալվող տողատակերում՝ շարադրելով 10-միավոր տառաչափով, 1-տողանի ֆայլով: Անհրաժեշտ է պահպանել տողատակերի շարունակական համարակալումը ամբողջ տեքստի համար: Նախընտրելի են սեղմ ծանոթագրություններ:

2.2.2. Հղումներ

Ոչ հեղինակային, օտար մտավոր սեփականության ցանկացած օգտագործման դեպքում անհրաժեշտ է հղել համապատասխան աղբյուրը. հակառակ դեպքում հեղինակը մեղադրվելու է գրագողության մեջ: Ոչ հեղինակային գաղափարները վերաշարադրող պարբերություններում հղում(ներ)ը տեղադրել պարբերության կամ յուրաքանչյուր ավարտուն մտքի վերջնահատվածում: Այսօրինակ հղումներում օգտագործված աղբյուրի համապատասխան էջերի վերաբերյալ տվյալները պարտադիր չեն, սակայն հղումը պիտի հստակորեն սահմանազատի շարադրանքի հեղինակային հատվածը ոչ հեղինակայինից: Հղումները պիտի լինեն հատակ հնարավորություն ապահովելով վերջիններիս ստուգման համար:

Սկզբունքորեն ընդունելի է հղումների ձևավորման ցանկացած տարբերակ, որն այս կամ այն հաջողությամբ օգտագործվում է մասնագիտական գրականության մեջ: Տարբերակների ընտրությունը անհրաժեշտ է մեկ անգամ ևս համաձայնեցնել գիտական ղեկավարի հետ, որն էլ կհուշի տվյալ կոնկրետ տարբերակի առանձնահատկությունները:

Առաջարկվում է, այնուամենայնիվ, հետևյալ տարբերակը.

– շարադրանքի ընթացքում հղվող հարակից աղբյուրը վերցվում է կլոր փակագծերի մեջ՝ (), որտեղ նշվում է աղբյուրի հեղինակի ազգանունը, աղբյուրի հրատարակման տարեթիվը և համապատասխան էջը (կամ էջերը) ըստ անհրաժեշտության. (Holes 1996) կամ (Bohas 1991:75-76): Հեղինակի ազգանվան և աղբյուրի հրատարակման տարեթվի միջև առկա է բացատ, իսկ տարեթիվը և էջերը միմյանցից անջատվում են երկու ուղղահայաց կետերով (վերջակետով):

– Շարադրանքի ընթացքում հղվող սկզբնաղբյուրի դեպքում օգտագործվելու է հեղինակի անունը, սկզբնաղբյուրի շեղագրված կրճատ անվանումը, որին հաջորդում են հատորը, համապատասխան էջը և մեջբերված տողերի համարները. (Hišām, Muğni I, 99.13-17): Արաբերեն և երայերեն սկզբնաղբյուրների դեպքում նախընտրելի են վերջիններիս տառադարձված տարբերակները: Բնագրի խմբագրի, հրատարակման տեղի, հրատարակչի և հրատարակության թվականի մասին ամբողջական տվյալները անհրա-

ժեշտ է տեղադրել *Օգտագործված գրականությունների ցանկում, Սկզբնաղբյուրներ* հատվածում՝ վերջինիս տառադարձված տարբերակով.

Hišām, Muğnī = Jamāl ad-Dīn 'Abū Muḥammad 'Abdallāh b. Yūsuf Ibn Hišām, *Muğnī l-labīb 'an kutub al-'ā'arīb*. Ed. by Māzin al-Mubārak and Muḥammad 'Alī Ḥamdallāh. Damascus: Dār al-Fikr, 1969.

Համահեղինակների դեպքում հղումներում օգտագործել միայն առաջին հեղինակի ազգանունը, որին հաջորդելու է *և ուրիշներ, և օրջյւս, et al.* նշարկումը (Arnold et al. 1993:71):

2.2.3. Մեջբերումներ

Որպես կանոն խրախուսվում են հեղինակային ձևակերպումները, ուստի պետք է խուսափել ոչ հիմնավորված հանախակի մեջբերումներից:

Ուղղակի մեջբերումներն անհրաժեշտ է հեղինակային շարադրանքից տարանջատել չակերտների միջոցով. խուսափել դրանց հեղինակային խմբագրումից և տեխնիկական ցանկացած փոփոխությունից՝ **թավազում**, *շեղագրում*, **ընդգծում** և այլն, որը չի համընկնելու մեջբերվող հատվածի բնագրային ձևավորմանը: Անհրաժեշտ է պահպանել նաև բնագրային ուղղագրության, կետադրության, օգտագործված տառադարձման առանձնահատկությունները: Եթե, այնուամենայնիվ, չի հաջողվում խուսափել մեջբերվող բնագրային տեքստի փոփոխություններից, ապա փոփոխությունների առկայության հանգամանք մատնանշել ուղղանկյուն փակագծերում հետևյալ նշարկմամբ՝ [թավազում]⁶ հեղինակի, – Ա.Ա.⁷]: Մեջբերվող բնագրային տեքստում ցանկացած հեղինակային հավելում վերցնել ուղղանկյուն փակագծերի մեջ՝ «բնագրային տեքստ [հեղինակի կողմից ավելացված հատված] բնագրային տեքստի շարունակություն»: Մեջբերման ընթացքում բաց թողնված արտահայտությունները կամ առանձին բառերը նշարկել ուղղանկյուն փակագծերի և բազմակետերի օգնությամբ՝ «բնագրային տեքստ [...] բնագրային տեքստի շարունակություն»: Այս դրույթը կիրառելի է նաև ոչ ավարտուն հատվածների մեջբերման դեպքերում՝ «[...] բնագրային տեքստ», «բնագրային տեքստ [...]»: Մեծածավալ մեջբերումները հեղինակ-

⁶ Կամ շեղագրում, կամ այլ փոփոխություն:

⁷ Ա.Ա.՝ շարադրանքի հեղինակի անվան և ազգանվան սկզբնատառեր:

կային շարադրամից ցանկալի է առանձնացնել փոփոխված տառաչափերով: Աշխատանքի շարադրման լեզվի հետ շհամընկնող ուղղակի մեջբերումներն ըստ անհրաժեշտության և գիտական ղեկավարի հետ համաձայնեցումից հետո թարգմանել շարադրամի լեզվով՝ նշելով թարգմանչի ինֆորմացիան ուղղանկյուն փակագծերում հետևյալ գրառմամբ՝ [թարգմանությունը հեղինակի, – Ա.Ա.]: Թարգմանաբար ներկայացված մեջբերումը վերցնել չակերտների մեջ:

Անուղղակի մեջբերումների դեպքում, երբ վերաշարադրվում կամ ֆինարկվում են ոչ հեղինակային մտեցումներն ու գաղափարները, այդ թվում՝ նաև թարգմանաբար ներկայացված, վերանում է նմանօրինակ շակերտների, սակայն ոչ հղման, առկայության անհրաժեշտությունը: Անուղղակի մեջբերումներն անհրաժեշտ է հղել հետևյալ կերպ՝ (հմմտ. հղում անուղղակի մեջբերման աղբյուրին: համապատասխան էջ), օրինակ՝ (հմմտ. Owens 2000:78-85):

Միջնորդավորված մեջբերումներ հղելիս անհրաժեշտ է նշել նախ սկզբնաղբյուրը և ապա միջնորդ աղբյուրը՝ ավելացնելով *մեջբերումը ըստ* նշարկումը. (սկզբնաղբյուր, մեջբերումը ըստ միջնորդ աղբյուր: համապատասխան էջ), օրինակ՝ (Звегинцев 1958:14, մեջբերումը ըստ Габучан 1965:115): Հնարավորության սահմաններում խուսափել միջնորդավորված մեջբերումներից:

3. ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեման, որպես կանոն, ընտրվում է այս կամ այն դասընթացի, մասնագիտացման, գիտական սեփական հետաքրքրությունների սահմաններում. ընտրությունը սահմանափակվելու է, սակայն, ուսումնական ծրագրերի և դասավանդվող գիտակարգերի շրջանակներում: Թեմաների ընտրության ընթացքում հաշվի են առնվում ինչպես ամբիոնում ձևավորված գիտական ուղղություններն ու մտեցումները, այնպես էլ ուսանողներին (մագիստրանտներին) գիտական ղեկավարներով ապահովելու հնարավորությունը: Թեմաների ընտրության ժամանակ որոշիչ են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են թեմայի արդիականությունը, գիտական նորոյթը, կիրառական և տեսական նշանակությունը, անհրաժեշտ

գրականության առկայությունը: Թեմայի ընտրության հարցում օգտակար են դասախոսների հետ ֆննարկումները, ընտրված մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) մասնագիտական գրականությանը ծանոթ լինելու հանգամանքը և այլն:

Հետազոտական աշխատանքի հենքում դրվում է կոնկրետ հարցադրում, որի շուրջ էլ կառուցվում է ամբողջական շարադրամբը: Թեմայի ընտրությունը դեռևս չի ենթադրում հարցադրման առաջադրում: Հարցադրումների առաջադրման և հստակեցման հնարավոր է հասնել ինչպես հանախակի ֆննարկումների և թեմային առնչվող առկա գիտական գրականության նախնական մշակման արդյունքում, այնպես էլ ենթահարցադրումների, հետազոտական նյութի սահմանափակման, հարցադրման լուսաբանվող սպեկտրների նեղացման միջոցով: Այսօրինակ «հնարները» նպաստում են նաև շարադրամբի պարզ ու հստակ կառուցվածքի ստեղծմանը:

Հնարավորության սահմաններում պետք է խուսափել լայն ընդգրկմամբ հարցադրումներից, ինչպես նաև աշխատանքի շարադրման նախաձեռնումից, առանց առաջադրվող հարցադրման ու վերջինիս իրագործելիության հնարավորությունների հստակ պատկերացման: Այս դեպքում մեծ է թեմայի բոլոր հնարավոր սպեկտրների ֆննարկման վրա վատնվող ժամանակի կորստի և զուտ նկարագրական շարադրամբի վտանգը:

Շարադրամբի համար վնոորոշ է նաև, թե ինչպիսի՞ հարցադրում կարող է հենց ինքը՝ հեղինակը առաջադրել ընտրված թեմայի շրջանակներում. բավարարելո՞ւ են արդյո՞ սեփական ունակություններն ու պատրաստվածության աստիճանը նյութի մանրակրկիտ ուսումնասիրության ու ներկայացման համար, և, ի վերջո, արդյո՞ւ նման հնարավորություն ընձեռելու են հեղինակին մատչելի հետազոտական նյութն ու մասնագիտական գրականությունը:

Եթե արժարժվելու են միջգիտակարգային հարցադրումներ, գիտական ղեկավարի հետ մեկտեղ կարող են նշանակվել նաև գիտական խորհրդատուներ:

4. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գիտական աշխատանքը գնահատելիս կարևորվելու են հետևյալ ուղեւշային դրույթները.

- աշխատանքի հիմնում ընկած հարցադրումների խորը և սպառիչ ներկայացում՝ հարցադրումներում կողմնորոշվելու, հարցադրումը մանրամասնելու և նշգրտումներ կատարելու ունակություն,
- սեղմ, հակիրճ ու բովանդակալից շարադրանք. սեղմագրելու հմտություն,
- աշխատանքը մասնատելու և համակարգված շարադրելու ունակություն,
- շարադրանքի բովանդակային մասնատման համարժեքություն հարցադրման ներկայացման տրամաբանվածությամբ,
- շարադրանքի ձևային կառուցվածքի համարժեքություն շարադրանքի բովանդակային մասնատմանը,
- մասնագիտական պատրաստվածության աստիճան, մասնագիտական գիտելիքներ, նպատակաուղղված, նշգրիտ շարադրանք,
- մասնագիտական տերմինաբանության ընդգրկվածություն և նշգրիտ օգտագործում,
- թեմային առնչվող մասնագիտական գրականության ամբողջական ընդգրկվածության աստիճան,
- ռելեվանտ և ադեկվատ մասնագիտական գրականության ընդգրկում,
- մասնագիտական ժամանակակից գրականության ներգրավվածության աստիճան,
- օտարալեզու աղբյուրների առկայություն,
- շարադրանքի ինֆնատիպություն, ինֆնուրոյնություն՝ ֆննադատաբար շարադրելու ունակության, հեղինակային մեկնաբանությունների, դիտողությունների, նկատառումների հանախականության աստիճան,
- մտքի շարադրման ընթացք՝ փաստարկների, պնդումների հստակություն, կոտորյուն. փաստարկների և սեփական գնահատականների հիմնավորվածություն,
- շարադրանքի ձև, ոճ՝ շարադրանքում ուղղագրական, կետադրական, ֆեռականական սխալների առկայություն,

- շարադրանքի ձևային կազմակերպման առանձնահատկություններ՝ ներկայացրած պահանջների պահպանվածություն, հղումների, մեջբերումների, աղբյուրների, գրականության ցանկի և այլնի ձևավորում:

Թվարկվող դրույթները, ինչպես արդեն նշվեց, սուս ուղենշային են գրավոր շարադրանքի գնահատման հարցում. առավել քան կարևոր է այն ընդհանուր տպավորությունը, որը թողնելու է ամբողջական աշխատանքը:

5. ՌԵՖԵՐԱՏՆԵՐ և ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Ռեֆերատը հետազոտական բնույթի աշխատանք է, որը ենթադրում է հետազոտական այլ աշխատանքների (դասագրքերի, գիտական հոդվածների, մենագրությունների) ամփոփ շարադրում՝ ըստ կոնկրետ խնդրի կամ հանձնարարված թեմայի: Ռեֆերատում ուսանողը ներկայացնում է տվյալ խնդրին առնչվող աղբյուրներում առկա հիմնադրույթները (գաղափարները, լուծումները, առաջարկությունները) և տեսակետները, հիմնավորում սեփական մոտեցումները դրանց վերաբերյալ:

Ռեֆերատը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակության ցանկից, ներածական և բուն շարադրանքի հատվածներից, օգտագործված գրականության ցանկից:

Ռեֆերատը կազմում է մինչև 15 DIN-A4 մեֆենագիր էջ բուն շարադրանք և համապատասխանում կառուցվածքային ձևավորման վերոնշյալ չափորոշիչներին (էջադրման չափեր, հղումներ, մեջբերումներ և այլն. տե՛ս *Գլուխներ 1-2*):

Ռեֆերատը ստուգում է դասավանդող դասախոսը: Գնահատելով ռեֆերատը՝ նա հաշվի է առնում ուսանողի՝ գիտական գրականության հետ աշխատելու, վիճարկելի դրույթներում տարբեր տեսակետներ վերլուծելու, սեփական կարծիքն ու մոտեցումները հիմնավորելու, հղումները, մեջբերումներն ու գրականության ցանկը ձևավորելու ունակությունները:

Զեկույցը որոշակի թեմայի շուրջ բանավոր հաղորդման գրառում է: Այն նախատեսված է սեմինարների, գիտական նստաշրջանների (համաժողովների) ընթացքում բանավոր ներկայացման համար: Եթե զեկույցման տեխնիկա հանձնվելու է դասավանդող դասախոսին, ապա այն ձևավորվելու է ինչպես ռեֆերատը:

Զեկույցի պատրաստման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն ժամանակահատվածը, որը հատկացվելու է վերջինիս ներկայացման համար: Զեկույցը ներկայացնելիս անհրաժեշտ է կենտրոնանալ գլխավոր ու հիմնադրությամբ հատվածների և եզրահանգումների վրա:

Զեկույցի տեխնիկական կարող է շարադրվել ամբողջությամբ կամ էլ թեզերի տեսքով: Վերջին դեպքում տրամաբանական հերթագայությամբ գրավելու են միայն հիմնական գաղափարները:

Ուսանողական զեկուցումները, որպես կանոն, բաղկացած են երեք մասից՝ ներածական, գլխավոր և ամփոփիչ: Առաջին մասում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, տեսական և կիրառական արժեքը, կարևորությունը. երկրորդ մասում՝ շարադրվում գիտական հիմնադրությունները, երրորդում՝ եզրահանգումներն ու առաջարկությունները:

6. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կուրսային աշխատանքը ուսումնական պլանով նախատեսված գրավոր աշխատանք է որոշակի թեմայի շուրջ, որը պարունակում է նաև գիտական ուսումնասիրության որոշ տարրեր: Կուրսային աշխատանքների շարադրումը ուսանողներին օգնում է խորացնել և ամրապնդել տվյալ գիտակարգում ձեռք բերված գիտելիքները, ձևավորում ինֆորմացիոն գիտական ուսումնասիրություններ, վերլուծություններ կատարելու հմտություններ:

Ուսումնական տարվա ընթացքում հանձնարարվում է միայն մեկ կուրսային աշխատանք: Կուրսային աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարները հաստատվում են ամբիոնում: Ամբիոնի կողմից հաստատված ցանկից ուսանողին տրվում է կուրսային աշխատանքի թեմա ընտրելու իրավունք: Աշխատանքի թեմա կարող է առաջարկել նաև ուսանողը, որը, սակայն, համաձայնեցվելու է գիտական ղեկավարի (դասավանդող դասախոսի) հետ՝ անմիջականորեն առնչվելով ուսումնասիրվող այս կամ այն գիտակարգին, որից հետո միայն ընդգրկվում ամբիոնի կողմից հաստատված ցանկի մեջ:

Որպես կանոն, գիտական ղեկավար է նշանակվում կուրսային աշխատանքի տվյալ թեման առաջարկող դասախոսը: Վերջինիս հետ անհրաժեշտ

է համաձայնեցնել աշխատանքի կատարման պլան-ժամանակացույցը (տե՛ս Հավելված 3), գրականության նախնական ցանկը:

Կուրսային աշխատանքի կառուցվածքը՝ տիտղոսաթերթ (տե՛ս Հավելված 1), բովանդակություն, ներածություն, բուն շարադրանք, եզրահանգումներ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ (առկայության դեպ-
քում):

Կուրսային աշխատանքի ծավալը կազմելու է 20-30 մեքենագիր DIN-A4 էջ բուն շարադրանք և նույնպես համապատասխանելու է կառուցվածքային ձևավորման վերոնշյալ չափորոշիչներին (էջադրման չափեր, հղումների, մեջբերումների ձևավորում և այլն. տե՛ս Գլուխներ 1-2):

Կուրսային աշխատանքների պաշտպանության ամսաթիվը հաստատ-
վում է դեկանատի կողմից: Աշխատանքներն անհրաժեշտ է հանձնել ամբի-
ոնի կողմից նշանակված և պլան-ժամանակացույցում արտացոլված ժա-
մանակահատվածում:

Կուրսային աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվելու վերջինիս գիտականության, հետազոտության նկատմամբ ստեղծագործական մո-
տեցման և կատարման ինֆորմայնության աստիճանը, ուսումնասիրված
գրականության քանակը, տեքստի շարադրման ոճը, ուսումնասիրության
արդյունքները պաշտպանելու ունակությունը:

7. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ավարտական աշխատանքը ավարտական որակավորման աշխատանք է, որտեղ ուսանողը ի ցույց է դնելու թեմային առնչվող ընդհանուր դրույթ-
ներն ամփոփ ներկայացնելու, գիտական հարցադրումներ, տեսական ընդ-
հանրացումներ և կիրառական եզրահանգումներ անելու ունակություն, հե-
տազոտության գիտական վերլուծության մեթոդների օգտագործման հմտու-
թյուններ: Ավարտական աշխատանքները

- ունեն ստեղծագործական բնույթ,
- համապատասխանում են նյութի հստակ, տրամաբանական, ավար-
տուն ու ամբողջական շարադրման պահանջներին,

- ցուցադրում են ուսանողի ունակությունները անհրաժեշտ հետազոտական նյութի ու գրականության որոնման, ընտրության, մշակման և համակարգման ուղղությամբ,

- ցուցադրում են սկզբնաղբյուրների հետ աշխատելու ուսանողի ունակությունները,

- համապատասխանում են շարադրանքի ձևավորմանն առաջադրվող պահանջներին (հստակ կառուցվածք, հղումների, սկզբնաղբյուրներից մեջբերումների, գրականության ցանկի ձևավորվածություն, աշխատանքի կատարման վայելուչ տեսք) (տե՛ս *Գլուխներ 1-2*):

Ավարտական աշխատանքի գիտականությունն արտահայտվում է թեմային առնչվող հարցադրումների վերաբերյալ տարբեր մոտեցումների վերլուծությամբ, դրանց համեմատությամբ, տեսական և կիրառական խնդիրներում հեղինակային դիրքորոշումների փաստարկմամբ, նոր գաղափարների առաջադրմամբ և այլն:

Կառուցվածքային առումով աշխատանքը բաղկացած է հետևյալ տարրերից. տիտղոսաթերթ, բովանդակություն, ներածություն, բուն շարադրանք, եզրահանգումներ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ (առկայության դեպքում): Աշխատանքի էջային սահմանափակումը կազմվելու է 30-45 DIN-A4 մեմենագիր էջ, վերոնշյալ ձևավորմամբ (տե՛ս *Գլուխներ 1-2*):

Միանշանակ խրախուսվելու են ուսանողների կողմից անցկացված (հոգելեզվաբանական, հանրալեզվաբանական, արխիվային, ձեռագրագիտական և այլն) հետազոտությունները, դաշտային աշխատանքների հիման վրա կատարված ուսումնասիրությունները, օտար լեզուներով օգտագործված գրականության և մեծամասնակ սկզբնաղբյուրների ներգրավվածությունը, ֆարտեզների, աղյուսակների հմուտ ու նպատակաուղղված օգտագործումը:

Ավարտական աշխատանքի թեման և գիտական ղեկավարը հաստատվում են ամբիոնի կողմից:

Շարադրանքի ավարտից հետո աշխատանքը ստորագրվում է հեղինակի կողմից և հանձնվում ամբիոն նախանշված ժամկետների ընթացքում: Հենվելով գիտական ղեկավարի բանավոր կարծիքի ու ընդհանուր գնահատա-

կանի և/կամ ավարտական աշխատանքի նախապաշտպանության արդյունքների վրա՝ ամբիոնի վարիչը աշխատանքը թույլատրում է պաշտպանության համապատասխան նշում կատարելով տիտղոսաթերթի վրա: Այնուհետև աշխատանքը տրվում է գրախոսության:

Գրախոսը ամբիոն է հանձնում գրախոսություն կատարված աշխատանքի վերաբերյալ, որտեղ ներկայացնում է աշխատանքի թույլ և ուժեղ կողմերը հե-տևյալ կառուցատիպով՝ աշխատանքի արդիականությունը, գիտական նորոպը, կատարված ուսումնասիրության տեսական և կիրառական արժեքը, աշխատանքի բովանդակային կառուցման հիմնավորվածությունը, հարցադրման լուսաբանման և օգտագործված գրականության ամբողջականությունը, թեմայի լուսաբանման մեջ հեղինակի ինֆորմացիայի, եզրահանգումների հիմնավորվածության, փաստարկների տրամաբանվածության, հեղինակային լուծումներ առաջարկելու ունակության աստիճան. աշխատանքի ձևավորման համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին, թերություններ, սխալներ, վիճարկելի դրույթներ, դիտողություններ աշխատանքի բովանդակության, ձևավորման և այլնի վերաբերյալ (համապատասխան էջերի մատնանշմամբ): Նմանօրինակ գրախոսությունը ենթադրում է հարգալից վերաբերմունք ոչ միայն ԲՈՒՀ-ի, ամբիոնի, ուսանողի նկատմամբ, այլ նաև դիտարկվում որպես մասնագիտական արհեստավարժության մշակույթի ցուցիչ (հմտ. Հավելված 4):

Գրախոսությունը, ավարտական աշխատանքի հետ մեկտեղ, մինչև աշխատանքի պաշտպանությունը, մեկշաբաթյա ժամկետում, դրվում է համընդհանուր ծանոթացման՝ ամբիոնում:

Պաշտպանության անցկացման օրը և վայրը նշանակում է ֆակուլտետի ղեկանատը՝ ըստ սահմանված կարգի:

Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անց է կացվում ավարտական աշխատանքների որակավորման պետական հանձնաժողովի բաց նիստի ընթացքում: Պաշտպանությունը սկսվում է ավարտական աշխատանքի հեղինակի ավարտաճանաչով, որից հետո հանձնաժողովի անդամները և բոլոր ներկաները, այդ թվում նաև պաշտպանության ներկայացված աշխատանքի գիտական ղեկավարը, հարցեր են ուղղում ավարտական աշխատանքի թեմայի վերաբերյալ: Հարցադրումների պատասխանները հնա-

րավորության սահմաններում հակիրճ են ու հիմնավորված: Պաշտպանության հաջորդ փուլում ներկայացվում է գրախոսությունը և (ցանկության դեպքում) գիտական ղեկավարի դիտողությունները, նկատառումները, կարծիքը կատարված աշխատանքի վերաբերյալ: Ավարտական աշխատանքի հեղինակին հնարավորություն է ընձեռվում պատասխանել գրախոսի դիտողություններին ու հիմնավորել այն դրույթները, որոնք արժանացել են դիտողությունների:

Ավարտական աշխատանքի գնահատականի համար հիմք են ծառայում գիտական ղեկավարի ընդհանուր գնահատականը, գրախոսի կարծիքը և պաշտպանության արդյունքները: Գնահատման ընթացքում հանձնաժողովը հաշվի է առնում թեմայի արդիականությունն ու նորույթը, կատարված աշխատանքի ծավալն ու որակը, ուսումնասիրության ինֆնորյունությունը, արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը, օգտագործված գիտական գործիքակազմն ու աշխատանքի ձևավորումը, պատասխանները հարցերին, պաշտպանության ընթացքում աշխատանքի հիմնադրույթներն ու եզրահանգումները հիմնավորելու հեղինակի ունակությունները:

8. ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև տրվում է գրականության համառոտ ցանկ, որը կարող է օգտակար լինել ինչպես գիտական շարադրանքի կառուցվածքային և տեխնիկական ձևավորմանն առաջադրվող պահանջներին ծանոթանալու, այնպես էլ անհրաժեշտ աշխատանքային նյութի հայթայթման, գնահատման, ներգրավման հարցում:

Ануфриев, А.Ф. (2002). *Научное исследование: курсовые, дипломные и диссертационные работы*. Москва.

Зимняя, И.А. (2000). *Научно-исследовательская работа: методология, теория, практика организации и проведения*. Москва.

Кузин, Ф.А. (1999). *Магистерская диссертация: методика написания, правила оформления, порядок защиты*. Москва.

Новиков, А.М. (1996). *Научно-экспериментальная работа в образовательном учреждении*. Москва.

- Усачева, И.В. (1990). *Методика информационно-поисковой деятельности исследователя*. Москва.
- Bänsch, A. (2003). *Wissenschaftliches Arbeiten – Seminar- und Diplomarbeiten*. 8. Aufl., München-Wien.
- Corsten, H. Und Deppe, J. (2002). *Technik des wissenschaftlichen Arbeitens*. 2. Aufl., München-Wien.
- Eco, U. (2005). *Wie man eine wissenschaftliche Abschlussarbeit schreibt*. 11. Aufl., Heidelberg.
- Standop, E. und Meyer, M.L.G. (2004). *Die Form der wissenschaftlichen Arbeit*. 17. Aufl., Heidelberg.
- Theisen, M.R. (2004). *Wissenschaftliches Arbeiten. Technik, Methodik, Form*. 12. Aufl., München.
- _____. (2006). *ABC des wissenschaftlichen Arbeitens*. 3. Aufl., München.

9. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Գրականության ձեռքբերման ներհոշարարչյալ հնարավորությունները վերաբերում են մասնավորապես ԵՊՀ գիտական, Հայաստանի ազգային և ԳԱԱ հիմնարար գրադարաններին: Գրադարաններից օգտվելու և գրականություն պատվիրելու կանոններին անհրաժեշտ է ծանոթանալ գրադարաններում:

Հայաստանյան գրադարանների գրապաշարի մատենագիտական տեղեկատու աղբյուր է Հայաստանյան էլեկտրոնային համահավաք գրացուցակը՝ <http://www.armunicat.am:8991/ALEPH>: Գրացուցակը ապահովում է նաև ԵՊՀ-ում գրականությունն անցանց պատվիրելու հնարավորություն:

Տարատեսակ տեղեկատվություն Հայաստանում գրադարանային գործի զարգացումների և նորությունների շուրջ հնարավոր է գտնել Հայաստանյան գրադարանային (<http://www.libnet.am>) և Հայաստանյան էլեկտրոնային հրատարակությունների (<http://www.elca.am>) միավորումների կայքերում:

Օգտակար այլ հղումներ.

էլեկտրոնային համահավաք գրացուցակներ՝

KVK – <http://www.ubka.uni-karlsruhe.de/kvk.html>

Library of Congress Online Catalog – <http://catalog.loc.gov/>

The European Library – <http://www.theeuropeanlibrary.org>

Գիտական ամսագրերի շտեմարաններ`

SpringerLink – <http://www.springerlink.com>

Cambridge Journals Online – <http://www.journals.cambridge.org>

The Berkeley Electronic Press –

<http://www.bepress.com/workingpapers.html>

Elektronische Zeitschriftenbibliothek – Գիտական ամսագրերի շտեմարան` [http://rzblx1.uni-](http://rzblx1.uni-regensburg.de/ezeit/fl.phtml?colors=3&bibid=UBBAY)

[regensburg.de/ezeit/fl.phtml?colors=3&bibid=UBBAY](http://rzblx1.uni-regensburg.de/ezeit/fl.phtml?colors=3&bibid=UBBAY)

Heriot Watt University (Electronic Journals & Databases) –

<http://www.hw.ac.uk/library/journals.html>

Oxford University Press – <http://www.oup.co.uk/>

Find Articles – <http://findarticles.com>

University of Chicago Press –

<http://www.journals.uchicago.edu/index.html>

EBSCO Research Databases – <http://search.epnet.com/login.asp>

Google Scholar – <http://scholar.google.com>

Արաբագիտական, սեմագիտական և իսլամագիտական ամսագրեր`

Arabica – <http://www.ingentaconnect.com/content/brill/arab>

Journal of Arabic and Islamic Studies – <http://www.uib.no/jais/jais.htm>

Journal of Arabic Linguistic Tradition – <http://www.jalt.net/jHome.aspx>

Journal of Semitic Studies – <http://jss.oxfordjournals.org/>

Zeitschrift für arabische Linguistik – <http://semitistik.uni-hd.de/zal/index.htm>

Թվային գրադարաններ`

Google Print – <http://print.google.com/>

Callica – <http://gallica.bnf.fr/>

Online Books – <http://digital.library.upenn.edu/books/>

Ազատ մուտքի հնարավորություններ գիտական ամսագրեր կառելի է գտնել հետևյալ կայքերում`

Directory of Open Access Journals – <http://www.doaj.org>

EPrints for Digital Repositories – <http://www.eprints.org/>

Registry of Open Access Repositories (ROAR) –

<http://archives.eprints.org>

Informaworld – <http://www.informaworld.com/smpp/home~db=all>
Թեմատիկ դարպասներ. ներկայացված պաշարները ինդեքսավորված և նկարագրված են մասնագետների կողմից՝

Renard – <http://www.renardus.org>

Pinakes – <http://www.hw.ac.uk/libwww/irn/pinakes/pinakes.html>

Islam Research Directory – Մերձավոր և Միջին Արևելքի մշակույթների, լեզուների ուսումնասիրությամբ զբաղվող գիտահետազոտական հաստատությունների, մասնագետների, հետազոտական կոնկրետ նախագծերի, գրադարանների շտեմարան՝

<http://www.islamresearchdirectory.org>

Շտեմարաններ՝

IngentaConnect (<http://www.ingenta.com>) – Առկա են մոտ 30000 հրատարակություններ՝ ավելի քան միլիոն հոդվածներով: Կարելի է որոնել և անվճար դիտել հոդվածների համառոտագրություններ՝

<http://www.ingentaconnect.com/?jsessionid=al3htpab2th8d.henrietta>

ERIC – Ամերիկյան կրթությանը վերաբերող գրականության շտեմարան. պարունակում է ավելի քան 1.2 միլիոն ամսագրային հոդվածների վերաբերյալ մատենագիտական նկարագրություն: Կարելի է գտնել անվճար ամբողջական տեքստային հոդվածներ՝ <http://www.eric.ed.gov>

Science Direct – <http://www.sciencedirect.com/>

CSA – <http://www.csa.com/>

WILEY – <http://eu.wiley.com/WileyCDA/>

ՄԱԿ-ի շտեմարաններ՝ <http://www.un.org/databases/index.html>

Թվային ատենախոսություններ. շտեմարանում ընդգրկված են 1000-ից ավելի եվրոպական և հյուսիս-ամերիկյան համալսարաններում պաշտպանված ատենախոսությունների համառոտագրություններ՝

<http://wwwlib.umi.com/dissertations/gateway>

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տիտղոսաթերթերի ձևավորման օրինակներ. Ռեֆերատ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ՂՈՒՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ռեֆերատ «Արաբագիտության ներածություն» դասընթացից
2006-2007 ուս. տարի

Հեղինակ՝ Հովհաննես Հովհաննիսյան
Էլ. հասցե՝ hovhannes@hovhannes.am
Ուսումնառության 6-րդ կիսամյակ
Ուս. տոմսի համար՝ 04ալ0404
Գիտ. ղեկավար՝ Բ.Գ.Ք., դոցենտ Արմեն Արմենյան

Հանձնվել է՝
17 ապրիլի 2007 թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ՕՄԱՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Կուրսային աշխատանք «Արարական երկրների պատմություն» դասընթացից
2006-2007 ուս. տարի

Հեղինակ՝ Հովհաննես Հովհաննիսյան
Էլ. հասցե՝ hovhannes@hovhannes.am
Ուսումնառության 7-րդ կիսամյակ
Ուս. տոմսի համար՝ 04ալ0404
Գիտ. ղեկավար՝ Բ.Գ.Ք., դոցենտ Ա.Բմեն Ա.Բմենյան

Հանձնվել է՝
17 ապրիլի 2007 թ.

Տիտղոսաթերթերի ձևավորման օրինակներ. Ավարտական աշխատանք

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

*Թույլատրված է պաշտպանության
«__» _____-ի 200__թ.
Ամբիոնի վարիչ՝ _____-*

ԱՐԱՐԱԿԱՆ ԼԵԶՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՑԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական աշխատանք

Ներկայացված է Արևելագիտության բակալավրի աստիճանի հայցմանը

Հայցորդ՝ Հովհաննես Հովհաննիսյան
Էլ.հասցե՝ hovhannes@hovhannes.am
Ուս. տոմսի համար՝ 04ալ0404
Գիտ. ղեկավար՝ Բ.Գ.Ք., դոցենտ Արմեն Արմենյան

*Պաշտպանության ամսաթիվ՝ «__» _____200__թ.
Գնահատական _____-*

(Գիտ. ղեկավարի ստորագրություն)

Հանձնվել է՝
17 ապրիլի 2007 թ.

Տիտղոսաթերթերի ձևավորման օրինակներ. Մագիստրոսական թեզ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Թույլատրված է պաշտպանության
«__» _____-ի 200__թ.
Ամբիոնի վարիչ՝ _____:

ՀԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Մագիստրոսական թեզ

Ներկայացված է Արաբագիտության մագիստրոսի աստիճանի հայցմանը
«Արաբական և սեմական լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրով

Հայցորդ՝

Հովհաննես Հովհաննիսյան

էլ.հասցե՝ hovhannes@hovhannes.am

Ուս. տոմսի համար՝ 04ալ0404

Գիտ. ղեկավար՝

բ.գ.թ., պրոֆ. Արմեն Արմենյան

Պաշտպանության ամսաթիվ՝ «__» _____ 200__թ.

Գնահատական _____:

(Գիտ. ղեկավարի ստորագրություն)

Հանձնվել է՝

17 ապրիլի 2007 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ձևակ-ձևակ թարգմանության (morph-by-morph translation) դեպքում օգտագործվող համառոտագրությունների և նշարկումների աղյուսակ ըստ (Payne 1997:xiv-xv)

1	first person	AN	animate
1INC	first person inclusive	ANT	anterior
1PL	first person plural	AP	antipassive
1SG	first person singular	APL	applicative
2	second person	ART	article
2DL	second person dual	ASP	aspect
2PL	second person, plural	ASSOC	associative
2SG, 2S	second person,	ATR	advanced tongue
singular			root
3	third person	AUG	augmentative
3DL	third person, dual	AUX	auxiliary
3FSG	third person, feminine	BEN	benefactive
	singular	CAUS	causative
3MSG	third person, masculine	CENT	centric
	singular	CL, CLS	classifier
3PL	third person, plural	CM	case marker
3POS	third person,	CN	connective ('and
possessor			then...')
3SG, 3S	third person, singular	COPM	complementizer
A	most agent-like	COMPL	completive
	argument of a multi-	COND	conditional
	argument clause	CONT	continuative
ABS	absolutive case	CONTR	contrast
AC	anticausative	COP	copula
ACC	accusative case	COR	coreference
ACT	actor	DAT, D	dative
ADJ	adjective	DC	deictic center
ADV	adverb	DECL	declarative
AGR	agreement	DEF	definite

DEM	demonstrative	IND	indicative
DEP	dependent	INDEF	indefinite
DERIV	derivational	INDIC	indicative
DET	determiner	INF	infinitive
DETRANS	detransitive	INFER	inferential mode
DIM	diminutive	INFL	inflectional
DIR	directional	INST	instrumental
DISJUNCT	disjunction	INTER	interrogative
DIST	distributive	INTR	intransitive
DO	direct object	INV	inverse
DR	downriver	INVIS	invisible
DS	different subject	IRR	irrealis
DUR	durative	ITER	iterative
E	epenthetic morph	LD	left-dislocation
ERG	ergative	LNK	linker
EVID	evidential	LOC	locative
EXIST	existential	MASC, M	masculine
EXO	exocentric	MID	middle voice
FEM, F	feminine	MIR	mirative
FOC	focus	MKR	marker
FRUST	frustrative	MOD	modifier
FUT	future	MSG	masculine singular
GEN, G	genitive	MVMT	movement
GF	goal focus	N	noun
GNO	gnomic	NEG	negative
HAB	habitual	NEU	neuter
HSY	hearsay	NF	non-finite
IMPER, IMP	imperative	NOM	nominative case, nominalizer
IMPERF	imperfective aspect	NONFUT	non-future tense
INAN	inanimate	NONPERF	non-perfective aspect
INC	inclusive	NONSPEC:I	non-specific
INCHO	inchoative	aspect,	intransitive verb
INCOMPL	incompletive		
INCORP	incorporation		

NP	noun phrase	QP	question particle
NP _{rel}	relativized noun phrase	QUAL	quality
NS	non-subject	RECIP	reciprocal
OBJ	object	REDUP	reduplication
OBL	oblique	REF	referential
OBV	obviative	REFL	reflexive
OPT	optative mode	REL	relativizer
P	least agent-like argument of a multi-argument clause	REP	repetitive
PART	participle	S	only argument of a single-argument clause, Sentence
PASS	passive	SEQ	sequence, sequential
PAST	past tense	SG	singular
PAST1	first past tense (immediate past)	SIM	simultaneous
PAST3	third past tense (distant past)	SM	subject marker
PAT	patient	SPEC	specifier
PERF	perfective aspect	SS	same subject
PL	plural	STAT	stative
PN, PRN	pronoun	STD	standard
POSS	possessive	SUB	subject
POT	potential	SUBJ	subjunctive mode
PP	prepositional phrase	SW	soundword
PPERF	past-perfective aspect	TAM	tense, aspect, mode
PR	participant reference	THM	theme
PRED	predicate	TNS	tense
PREF	prefix	TOP	topic
PRES	present tens	TRANS	transitive
PROG	progressive aspect	TVF	truth value focus
PROX	proximate	UNDOER	undergoer
PURP	purpose	UR	upriver
QM	question marker	V	verb
		VBLZR	verbalizer

VER

veridical mode

Որևէ օրինակի սկզբնահատվածում վերդրված աստղանիշը (*) նշանակում է, որ տվյալ լեզվում օրինակը ֆերականորեն ճիշտ ձևավորված ասույթ է. որևէ օրինակի սկզբնահատվածում վերդրված հարցական նշանը (?)՝ օրինակը տվյալ լեզվում ընդունելի է միայն պայմանականորեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Գիտական աշխատանքի կատարման աշխատանքային պլան-ժամանակացույցի օրինակ

Ավարտական աշխատանքի (Մագիստրոսական թեզի) կատարման պլան-ժամանակացույց

Հաստատում եմ

Գիտական ղեկավար՝ _____

«__» _____-ի 200_թ.

Ավարտական աշխատանքի (Մագիստրոսական թեզի) թեմա՝

Հեղինակ՝ (Մագիստրանտ) _____

Թիվ	Աշխատանքի բնույթն ու ծավալը	Կատարման ժամկետը	Գիտ. ղեկավարի նշումը կատարման վերաբերյալ
1.	Թեմայի ընտրություն, թեմայի և գիտական ղեկավարի հաստատում, պլան-ժամանակացույցի կազմում		
2.	Անհրաժեշտ մասնագիտական գրականության ձեռքբերում և մշակում		
3.	Ատենախոսական առաջարկի (ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պլանի) կազմում, ֆինանսավորում		
4.	Առաջին գլխի շարադրում		
5.	Երկրորդ գլխի շարադրում		
6.	... գլխի շարադրում և արդյունքների ամփոփում		
7.	Գիտ. ղեկավարին ամբողջական աշխատանքի սևագիր տարբերակի հանձնում		
8.	Թերությունների, բացթողումների վերացում և աշխատանքի հանձնում		
9.	Ծանոթացում աշխատանքի վերաբերյալ գրախոսությունների և այլ կարծիքների հետ		
10.	Աշխատանքի պաշտպանության համար զեկուցման թեզերի պատրաստում		

Հեղինակի ստորագրություն՝ _____

«__» _____-ի 200_թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Գիտական աշխատանքի գրախոսություն (ընդդիմախոսություն) շարադրման կառուցվածքի օրինակ

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՈՒՍԱՆՈՂ (ՄԱԳԻՍՏՐԱՆՏ) ՀՈՎՀԱՆՆԵՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ՝ «ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ) ՄԱՍԻՆ

Գրախոսության (ընդդիմախոսության) մեջ անհրաժեշտ է նախ և առաջ ներկայացնել աշխատանքի առավելությունները, բացթողումներն ու թերությունները՝ հետևյալ ընդհանրական կառուցատիպի հենքի վրա.

- թեմայի արդիականությունը և գիտական նորույթը հեղինակի և գրախոսի (ընդդիմախոսի) տեսանկյունից,
- հեղինակի կողմից դրված հարցադրումներին լուծումներ առաջարկելու աստիճան,
- շարադրանքի բովանդակային կառուցվածքի և վերջինիս ձևային մասնատման գնահատական,
- հարցադրման ամբողջական ներկայացման աստիճան,
- շարադրանքի գիտականության աստիճան՝ հետազոտական մեթոդներ, հարցադրումներ կատարելու ունակություն, գիտական տեսակետների վերլուծության ունակություն, եզրակացությունների ու հեղինակային առաջարկների հիմնավորվածություն, բերվող փաստարկներ, հարցադրումների մեկնաբանման հեղինակի ինֆորմությունության աստիճան,
- ներգրավված հետազոտական նյութ,
- սխալներ, թերություններ, վիճարկելի դրույթներ, հեղինակային կոնկրետ պնդումների, դրույթների և ընդհանուր աշխատանքի վերաբերյալ առանձին դիտողություններ (էջերի մասին տվյալներով),
- աշխատանքի համապատասխանությունը որակավորման ավարտական պահանջներին:

Աշխատանքի գնահատականը՝ «(ԳԵՐԱԶԱՆՅ, ԼԱՎ, ԲԱՎԱՐԱՐ, ԱՆԲԱՎԱՐԱՐ)» սանդղակով:

ԳԻՏԱԿԱՆ ԿՈԶՈՒՄ, ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

ԲՈՒՀ, ԱՄԲԻՈՆ, ՊԱՇՏՈՆ

«__» _____-ի 200_թ.

(ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Եբրայերենի իսրայելական, աշքենազական, սեֆարդական, եմենական, տիբեթական և վերականգնված միշնայական ու աստվածաշնչյան գրադարձական – հնչույթագրական այբուբեն (ՄՀԸ – IPA գրանշաններ)

ՄՀԸ – IPA գրադարձական – հնչույթագրական այբուբեն							
Գրանշան	Իսրայելական	Աշքենազական	Սեֆարդական	Եմենական	Տիբեթական	Վերականգնված	
						Միշնայական	Աստվածաշնչյան
א	ʔ	-	ʔ, -	ʔ, -	ʔ, -	ʔ, -	ʔ
ב	b	b	b	b	b	b	b
בּ	v	v, v□	b ~ β ~ v	b	v	β	b
ג	g	g ~ ġ	g, g ~ ɣ	j, ɣ	g, ɣ	g, ɣ	g
ד	d	d ~ d□	ḏ ~ ḏ	ḏ, ḏ	ḏ, ḏ	ḏ, ḏ	ḏ
ה	h~ʔ, -	h, -	h, -	h, -	h, -	h, -	h
ו	v	v ~ v□	v	w	w	w	w
ז	z	z ~ z□	z	z	z	z	dz
ח	χ~ħ	x	ħ	ħ	ħ	ħ, x	ħ, x
ט	t	t	ṭ	ṭ	ṭ	ṭ ^ʕ	ṭ ^ʔ
י	y	y	y	y	y	y	y
כ	k	k	k	k	k	k	k
ך, ם	χ	x	x	x	x	x	k
ל	l	l ~ ʔ	l	l	l	l	l
מ, ם	m	m	m	m	m	m	m
נ, ן	n	n	ṇ	ṇ	ṇ	ṇ	ṇ
ס	s	s	s	s	s	s	s
ע	ʔ~ʕ, -	-	ʕ, ɣ, -	ʕ	ʕ	ʕ, ɣ	ʕ, ɣ
פ	p	p	p	f	p	p	p
פּ	f	f	f	f	f	ϕ	p
צ, ץ	ts	ts	ts	s	s	s ^ʕ	ts ^ʔ , tʃ ^ʔ , tʃ ^ʔ
ק	k	k	k	g	q	Q	k ^ʔ
ר	ʁ	ʀ	r ~ ʀ	r ~ ʀ	ʀ	ʀ	ʀ
שׁ	ʃ	ʃ	ʃ	ʃ	ʃ	ʃ	tʃ, tʃ ^ʔ
שׂ	s	s	s	s	s	S	s
ת	t	t, s	ṭ, θ	ṭ, θ	ṭ, θ	ṭ, θ	ṭ

Մ.Մ. ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Ուսումնաստանողի ձեռնարկ

Մրբագրիչ՝ Ա. Դանիելյան
Համակարգչային ձևավորումը՝ Ռ. Թարումյան

Ստորագրված է տպագրության 15.02.08 թ.:
Չափսը՝ 60 x 84^{1/16}: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 2.2 մամուլ.
տպագր. 3.0 մամուլ = 2.8 պայմ. մամուլի:
Տպաֆանակ՝ 200: Պատվեր՝ 22:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: